Հրապարակման ենթակա է

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի սեպտեմբերի 23-ից 27-ը
Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Դավիթ Անանյան
2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ
3. Գործուղման վայրը և ժամկետները՝
Բելգիայի Թագավորություն, Բրյուսել, սեպտեմբերի 23-ից 27-ը
4. Հրավիրող կողմը՝
Համաշխարհային մաքսային կազմակերպություն
5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝
Մասնակցություն Համաշխարհային մաքսային կազմակերպության Ներդաշնակ համակարգի կոմիտեի հերթական՝ 64-րդ նիստին, ինչպես նաև հանդիպում Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի և Համաշխարհային մաքսային կազմակերպության մի շարք դիրեկտորատների տնօրենների հետ (կարողությունների զարգացման դիրեկտորատի տնօրենի, համապատասխանեցման և պարզեցման դիրեկտորատի տնօրենի հետ):
6. Քննարկված թեմաները՝
Համաշխարհային մաքսային կազմակերպության Ներդաշնակ համակարգի կոմիտեի 64-րդ նիստի ընթացքում քննարկվել են կարևոր հարցեր, ինչպես օրինակ՝ դասակարգմանը վերաբերող համառոտագրի փոփոխությունները, տեղի է ունեցել առանձին ապրանքների դասակարգման հարցերի կրկնակի քննարկում, որոշ ապրանքների դասակարգումը պարզաբանելու համար բացատրական նշումների հնարավոր փոփոխությունները, ինչպես նաև առանձին ապրանքների դասակարգմանը վերաբերող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կայացել են հանդիպումներ Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի, ինչպես նաև այդ կազմակերպության մի շարք դիրեկտորատների տնօրենների հետ (կարողությունների զարգացման դիրեկտորատի տնօրենի, համապատասխանեցման և պարզեցման դիրեկտորատի տնօրենի հետ), մասնավորապես քննարկվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համար կարևոր նշանակություն ունեցող հարցեր, որոնցից են՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության «Mercator» ծրագրի իրագործումը՝ հաշվի առնելով, որ ՀՀ-ն միացել է ԱՀԿ առևտրի դյուրացման համաձայնագրին, ՀՄԿ-ն «Mercator» ծրագրի շրջանակներում ցուցաբերում է երկարաժամկետ աջակցություն այդ համաձայնագրի դրույթների կիրարկման ոլորտում, Համաշխարհային մաքսային կազմակերպության «N-CEN» ծրագրի ներդրումը,

ինչը կապահովի անխափան և անմիջական կապ աշխարհի բոլոր երկրների մաքսային ծառայությունների իրավապահ ստորաբաժանումների միջև և այլն: Հանձնվել են «Mercator» ծրագրի շրջանակներում ս.թ. մայիսին կայացած դիագնոստիկ առաքելության արդյունքները և համապատասխան առաջարկությունները՝ ուղղված մաքսային համակարգի բարեփոխումներին: Քննարկվել են ՀՄԿ գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի Հայաստանի Հանրապետություն այցի մանրամասները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության գլխավոր քարտուղարը համաձայնություն է հայտնել այցելել Հայաստան ս.թ. նոյեմբերի 18-19-ը: Այցի շրջանակներում Կունիո Միկուրիան կմասնակցի «Թվային լուծումներ անդրսահմանային համագործակցության և առևտրի դյուրացման» տարածաշրջանային համաժողովին , ինչպես նաև կայցելի Գյումրիի նորաբաց արտաքին տնտեսական գործունեության սպասարկման կենտրոնը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության Ներդաշնակ համակարգի կոմիտեի հաջորդ՝ 65-րդ նիստը կայանալու է 2020 թվականի գարնանը քաղաք Բրյուսելում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____

02.10.2019թ.